ՇԻՐԱԿԱՑՈՒ ՃԵՄԱՐԱՆ • ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ

ՃԵՄԱՐԱՆ
LYCEUM

«ՇԻՐԱԿԱՑՈՒ ՃԵՄԱՐԱՆ»
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ



ROUND SQUARE

COLEGIO DEL MUNDO • WORLD SCHOOL • ÉCOLE DU MONDE

CIS MEMBER

ՇԻՐԱԿԱՑԻ ՃԵՄԱՐԱՆ
LYCEUM

"Shirakatsy Lyceum"
International Scientific-Educational Complex

«Հաստատեցում եմ»
«Շիրակացու Ճեմարան» միջազգային
գիտակրթական համալիր» ՓԲԸ-ի
տնօրեն
---------- Ա. Ալիխանյան

«ՇԻՐԱԿԱՑՈՒ ՃԵՄԱՐԱՆ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ» ՓԲԸ-Ի

ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

2025-2026 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ

ROUND SQUARE

CIS MEMBER

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԱԽԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ 3

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ 3

3. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ 3

4. ԱՌՈՒՅԹԻ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ԵՎ ԱՅԱՎԱՐՄԱՆԸ 6

5. ՈՒՍՈՒՑՄՈՒՄԸ ԵՎ ՄՇՏԱՑՈՒՄԸ 9

6. ԲԱՑԱՌԻԿ ՀԱՆՁՆԱԺՈՒՆՔՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿՈՒՄ 10

1. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ

1.1. «Շիրակացու անվան Ճեմարան» Միջազգային Գիտակրթական Համալիր» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Ճեմարան), հավատարիմ մնալով իր առաքելությանը՝ կերտել ազգային հենքի վրա ձևավորված համամարդկային արժեքներ կրող իսկական մտավորական և քաղաքացի, կարևորում է անվտանգ կրթական միջավայրի ստեղծումը, առողջության և բարեկեցության ապահովումն իր համայնքի բոլոր անդամների համար:

1.2. Սույն քաղաքականությունը պարտադիր է և Ճեմարանի միջադեպերի կանխարգելման ռազմավարության կարևոր մասն է կազմում:

1.3. Այս քաղաքականությունը սահմանում է այն սկզբունքները, պարտականությունները և ընթացակարգերը, որոնց միջոցով Ճեմարանն ապահովում է անվտանգ, առողջ և սատարող միջավայր՝ բոլոր սովորողների, աշխատակիցների, ծնողների, կապալառուների և այցելուների համար:

1.4. Սույն քաղաքականությունը տարածվում է Ճեմարանի բոլոր մասնաշենքերում և ենթակառուցվածքներում իրականացվող գործունեության, Ճեմարանական գործունեության ձևերի, ծրագրերի, միջոցառումների, տրանսպորտային փոխադրումների, ինչպես նաև Ճեմարանից դուրս իրականացվող գործունեությունների վրա:

1.5. Սույն քաղաքականությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության պահանջներին, Միջազգային բակալավրիատի չափորոշիչներին և ընթացակարգերին, ինչպես նաև ՄԴԽ հավատարմագրման պահանջներին:

1.6. Ճեմարանը ակնկալում է և ձեռնարկում է ողջամիտ ջանքեր, որպեսզի իր հիմնական կապալառուներն ու գործընկեր կազմակերպությունները պահպանեն սույն քաղաքականությունը:

2. ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

2.1. Ճեմարանն առաջնահերթ է համարում ապահովել իր համայնքի բոլոր անդամների ֆիզիկական և հուզական անվտանգությունը:

2.2. Ճեմարանը ներդրել է պատասխանատվության, բարեկեցության և կայունության մշակույթը:

2.3. Ճեմարանի գործունեությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության և միջազգային հավատարմագրման բոլոր պահանջներին:

2.4. Ռիսկերը բացահայտվում, գնահատվում և կառավարվում են՝ վնասների կանխարգելման նպատակով:

2.5. Մշակված պլանները, կանոնավոր վարժանքները և շարունակական ուսուցումը ապահովում են պատրաստվածությունն արտակարգ իրավիճակների ժամանակ:

2.6. Առողջության և անվտանգության ընթացակարգերը շարունակաբար վերահսկվում, գնահատվում և կատարելագործվում են:

3. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Տնօրենության Խորհուրդ

3.1. Տնօրենության խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) հաստատում է Առողջապահության և անվտանգության քաղաքականությունը և ապահովում է դրա արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսները:

3.2. Խորհուրդն ապահովում է Ճեմարանի գործունեության համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին, ինչպես նաև բավարարում Միջազգային բակալավրիատի և ՄԴԽ հավատարմագրման սպասելիքները:

3.3. Խորհուրդն ստեղծում է Առողջության և անվտանգության կոմիտե (այսուհետ՝ նաև Կոմիտե), որի կազմում ընդգրկվում են առաջնորդության, գործառնական և ուսուցչական կազմի ներկայացուցիչներ՝ հավասարակշռված վերահսկողություն ապահովելու նպատակով:

3.4. Անվտանգության կոմիտեն և առաջնորդությունը պարտավոր են ապահովել Ճեմարանի գործունեության անվտանգությունը:

Տնօրենություն և մանկավարժական առաջնորդություն

3.5. Տնօրենության խորհուրդը և մանկավարժական առաջնորդության թիմն իրականացնում են այս քաղաքականությունը Ճեմարանում:

3.6. Նրանք վերահսկում են ռիսկերի գնահատման գործընթացը և ապահովում են հայտնաբերված ռիսկերի անհապաղ վերացումը:

3.7. Նրանք ապահովում են արտակարգ իրավիճակներին պատրաստվածությունը՝ արտակարգ իրավիճակների պլանների մշակման, կանոնավոր վարժանքների

կազմակերպման, ինչպես նաև անձնակազմի շարունակական վերապատրաստման միջոցով:

3.8. Նրանք համակարգում են սովորողների և անձնակազմի բարեկեցությանն ուղղված ծրագրերը և տնօրենության խորհրդին հաղորդում են անվտանգության հետ կապված էական խնդիրները:

Առողջության և Անվտանգության կոմիտե

3.9. Առողջության և անվտանգության կոմիտեն վերահսկում է առողջության պահպանման և անվտանգության ընթացակարգերի պահպանումը ճեմարանի ողջ տարածքում:

3.10. Կոմիտեն վերանայում է միջադեպերի վերաբերյալ հաղորդումները, ուսումնասիրում է դրանց պատճառները և իրականացնում է համապատասխան կարգավորող գործողություններ:

3.11. Կոմիտեն համակարգում է արտակարգ իրավիճակների վարժանքները (հրդեհի, երկրաշարժի և հակահամաճարակային միգոցառումների ժամանակ), ինչպես նաև գնահատում է դրանց արդյունավետությունը:

Տեսուչները, համակարգողները և ամբիոնի ղեկավարները

3.12. Տեսուչները, համակարգողները և ամբիոնի ղեկավարները կիրառում են անվտանգության ընթացակարգերն իրենց համապատասխան ստորաբաժանումներում:

3.13. Նրանք պարբերաբար իրականացնում են ստուգումներ դասարաններում, լաբորատորիաներում, խաղահրապարակներում և մյուս ենթակառուցվածքներում:

3.14. Նրանք պատասխանատու են հայտնաբերված վտանգների ժամանակին վերացման և անվտանգության վերաբերյալ թարմացումները անձնակազմին հաղորդման համար:

Ուսուցիչներ, մանկավարժներ, առաջնորդներ և կազմակերպիչներ

3.15. Ուսուցիչներն ապահովում են անվտանգ միջավայր լսարանում և հետևում են տվյալ առարկային հատուկ անվտանգության կանոնակարգերին:

3.16. Ուսուցիչները, մանկավարժները, առաջնորդները և կազմակերպիչները վերահսկում են սովորողներին դասերի ընթացքում, դասամիջոցներին և ուսումնական այլ միջոցառումների ժամանակ:

3.17. Ուսուցիչները, մանկավարժները, առաջնորդները և կազմակերպիչները անհապաղ հաղորդում են վտանգների, ոչ անվտանգ պայմանների, միջադեպերի և վրիպումների վերաբերյալ(ըստ հավելված 2-ի):

3.18. Ուսուցիչները, մանկավարժները, առաջնորդները և կազմակերպիչները լրացնում են միջադեպերի վերաբերյալ հաղորդումների ձևաթղթերը և արտակարգ իրավիճակների վարժանքների ընթացքում գործում են սահմանված ընթացակարգերին համապատասխան:

Ճեմարանի անձնակազմը

3.19. Բոլոր աշխատակիցները պարտավոր են մշտապես հետևել առողջության և անվտանգության ընթացակարգերին:

3.20. Աշխատակիցները անհապաղ հաղորդում են վտանգների, ոչ անվտանգ պայմանների կամ անվտանգության հետ կապված մտահոգությունների մասին:

3.21. Աշխատակիցները մասնակցում են առողջապահության, անվտանգության, պաշտպանության և արտակարգ իրավիճակներին արձագանքման վերաբերյալ պարտադիր տարեկան վերապատրաստմանը:

3.22. Անհրաժեշտության դեպքում անձնակազմը օգնում է տարհանման կամ արտակարգ իրավիճակների ընթացակարգերի հետ կապված:

Սովորողները

3.23. Սովորողները հետևում են անձնակազմի կողմից տրված անվտանգության ցուցումներին:

3.24. Սովորողները պարտավոր են իրենց վարքով չվտանգել սեփական կամ այլ անձանց անվտանգությունը:

3.25. Սովորողները հաղորդում են անձնակազմին անվտանգության խախտումների կամ ոչ անվտանգ պայմանների վերաբերյալ:

3.26. Սովորողները ակտիվորեն մասնակցում են անվտանգության միջոցառումներին և արտակարգ իրավիճակների արձագանքման հետ կապված գործողություններին:

Ծնողները և խնամակալները

3.27. Ծնողները և խնամակալները պարտավոր են ներկայացնել ճիշտ և թարմացված բժշկական տվյալներ, ինչպես նաև արտակարգ իրավիճակների համար նախատեսված կոնտակտային տվյալներ:

3.28. Նրանք աջակցում են Ճեմարանի՝ առողջության և անվտանգության քաղաքականության կիրառման հարցում և ապահովում են անվտանգության կանոնների պահպանումը տանը:

3.29. Նրանք համագործակցում են Ճեմարանի հետ՝ առողջության հետ առնչվող հարցերում:

Այցելուները և կապալառուները

3.30. Այցելուները Ճեմարանի տարածքում գտնվելիս պարտավոր են հետևել անվտանգության բոլոր կանոններին:

3.31. Կապալառուները ընդհանուր հարցերով փոխտնօրենի կողմից հրահանգավորվում են անվտանգության վերաբերյալ:

3.32. Այցելուները և կապալառուները պարտավոր են պահպանել անվտանգության կանոններով սահմանված պահանջները:

4. ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ

Միջադեպերի վերաբերյալ հաղորդում և հետաքննության ընթացակարգ

4.1. Բոլոր վթարները, միջադեպերը և խախտումները պետք է անհապաղ հաղորդվեն վերահսկող անձնակազմի համապատասխան անդամին:

4.2. Միջադեպերի վերաբերյալ հաղորդման ձևաթղթերը պետք է լրացվեն դեպքի նույն օրը:

4.3. Անմիջական ղեկավարներն ուսումնասիրում են միջադեպը և իրականացնում համապատասխան միջոցառումներ:

4.4. Առողջության և անվտագության կոմիտեն վերանայում է միտումները՝ դրանց կրկնությունը կանխելու նպատակով:

Առաջին օգնություն

4.5. Ճեմարանի Առողջության կենտրոնը համալրված է արհեստավարժ անձնակազմով:

4.6. Յուրաքանչյուր կառույցում(մանկակրթարան, կրտսեր դպրոց, միջին դպրոց, ավագ դպրոց) Ճեմարանն ունի որակավորված առաջին բուժօգնության մասնագետներ:

4.7. Առաջին բուժօգնության պայուսակները ստուգվում և համալրվում են ամեն ամիս:

Հրդեհային անվտանգություն

4.8. Հրդեհային ազդանշանները, մարիչները և տարհանման պլանները ենթարկվում են պարբերական սպասարկման և փորձարկման:

4.9. Հրդեհային տարհանման միջոցառումները իրականացվում են յուրաքանչյուր կիսամյակում մեկ անգամ:

Թափոնների կառավարում

4.10. Քիմիական, կենսաբանական, կլինիկական և ընդհանուր թափոնները տեսակավորվում և հեռացվում են գործող կանոնակարգերի պահանջներին համապատասխան:

4.11. Վտանգավոր թափոնները հեռացվում են լիցենզավորված կապալառուների կողմից:

4.12. Լաբորատորիայի և Առողջության կենտրոնի անձնակազմը հետևում է թափոնների հեռացման ընթացակարգերին:

Սանիտարական մաքրություն և սանտեխսպասարկում

4.13. Ճեմարանում սանիտարական մաքրությունը ապահովվում է ամեն օր:

4.14. Հիգիենայի և անվտանգության պահանջների պահպանումը վերահսկվում է շաբաթական ստուգումների և տարեկան աուդիտների միջոցով:

Ներգրավված խորհրդատուներ

4.15. Ճեմարանը անհրաժեշտության դեպքում ներգրավում է անվտանգության հարցերով այլ մասնագետների:

Անվտանգության վերապատրաստում

4.16. Աշխատակիցներն անցնում են առաջին բուժօգնության, անվտանգության և թվային անվտանգության վերաբերյալ տարեկան վերապատրաստումներ:

Տեխնիկական սպասարկում

4.17. Կանխարգելիչ տեխնիկական սպասարկումն իրականացվում է համաձայն ՀՀ կանոնակարգերի և միջազգային լավագույն փորձի:

Խաղահրապարակի և սարքավորումների անվտանգության ապահովում

4.18. Խաղահրապարակները ստուգվում են ամեն շաբաթ:

4.19. Սարքավորումները ստուգվում են եռամսյակը մեկ:

4.20. Արձակուրդների ընթացքում իրականացվում է ակտիվ վերահսկողություն:

Ճեմարանական էքսկուրսիաներ և արտաճեմարանական գործունեություն

4.21. Բոլոր էքսկուրսիաների, տեղական կամ միջազգային այցերի մասին ծնողը տեղեկանում է նախօրոք, ըստ անհրաժեշտության, իսկ արտագնա էքսկուրսիաների, այցերի ժամանակ պատաղիր պահանջվում է ծնողի գրավոր համաձայնությունը:

4.22. Յուրաքանչյուր ճամփորդության/էքսկուրսիայի համար կատարվում է ռիսկերի գնահատում:

4.23. Համապատասխան վերահսկողության նորմերը պահպանվում են:

4.24. Բժշկական անձնակազմը ապահովում է բժշկական տեղեկատվության, ինչպես նաև արտակարգ իրավիճակների դեպքում կոնտակտային տվյալների հասանելիությունը:

4.25. Մեծ խմբերին ուղեկցում է բուժաշխատող:

Լողի մարզումներ և ճեմարանից դուրս գտնվող լողավազաններ

4.26. Մանկակրթարանի և Կրտսեր դպրոցի լողի դասերը անցկացվում են Ճեմարանի կողմից հաստատված լողավազաններում, համաձայն Ճեմարանի հետ կնքված պայմանագրի:

4.27. Լողավազանի հաստատումից առաջ Ճեմարանի տնօրենության կողմից իրականացվում է դրանց համապատասխանության ստուգում առողջության, անվտանգության, հիգիենայի և վերահսկողության սահմանված չափանիշներին:

4.28. Լողի մարզումներին մասնակցելու համար անհրաժեշտ է ծնողի գրավոր համաձայնությունը:

4.29. Լողի մարզումների համար իրականացվում են ռիսկերի ամբողջական գնահատում, որը ներառում է տրանսպորտը, հանդերձարանները, լողավազանի անվտանգությունը և վերահսկողության կազմակերպումը:

4.30. Սովորողների և մեծահասակների սահմանված համամասնությունը մշտապես պահպանվում է ներառյալ որակավորված լողի հրահանգիչները և Ճեմարանի ուղեկցող անձնակազմը(առնվազն մեկ մեծահասակ վեց երեխա հարաբերակցությամբ): Անհրաժեշտության դեպքում սովորողներին ուղեկցում է հոգեբան:

4.31. Սովորողները վերահսկվում են տրանսպորտում՝ տրամադրված լողի մարզումների համար, հանդերձարաններում, և ողջ լողի մարզումների ընթացքում:

4.32. Սովորողները նախօրոք ծանոթանում են լողավազանի կանոններին Ճեմարանում, որից հետո ունենում են ներածական պարապմունքներ՝ կանոններին գործնականում ծանոթանալու և դրանցով առաջնորդվելու նպատակով:

4.33. Արտակարգ իրավիճակների արձագանքման ընթացակարգերը, ներառյալ փրկարարների առկայության և առաջին բուժօգնության ապահովման հարցերը, Ճեմարանի տնօրենության կողմից նախապես համաձայնեցվում են լողավազանի տնօրենության հետ:

4.34. Լողավազանում ծագած միջադեպերի մասին անհապաղ տեղեկացվում են ծնողները և Ճեմարանի կրտսեր դպրոցի տնօրենությունը:

4.35. Մարզիչներին և վերահսկող անձնակազմին հաղորդվում է սաների առողջական վիճակի մասին տեղեկատվություն, այդ թվում՝ ալերգիաների և լողի սահմանափակումների վերաբերյալ:

Ճեմարանի տրանսպորտային ծառայություն

4.36. Վարորդներն ունեն գործող վարորդական իրավունքներ և անցնում են տարեկան բուժզննումները:

4.37. Տրանսպորտային միջոցները կանոնավոր ստուգվում են տրանսպորտային ծառայության ղեկավարի կողմից(առաջին օգնության արկղիկներ, սանիտարահիգիենիկ վիճակ, կրակմարիչներ և այլն):

4.38. Տրանսպորտից օգտվելու ամբողջ ընթացքը վերահսկվում է համաձայն տրանսպորտային փոխադրումների կազմակերպման կարգի:

Տարածքում աշխատող կապալառուները

4.39. Կապալառուները հետևում են Ճեմարանի կողմից սահմանված անվտանգության ընթացակարգերին:

4.40. Անհրաժեշտության դեպքում կիրառվում է աշխատանքի թույլտվություն ը տարածքում:

4.41. Շինարարական տարածքների մուտքը վերահսկվում է՝ սովորողների և անձնակազմի անվտանգությունն ապահովելու նպատակով:

Տրանսպորտի շարժը Ճեմարանի տարածքում

4.42. Ճեմարանի տարածքում կիրառվում է արագության սահմանափակում.

4.43. Հետիոտների և տրանսպորտային միջոցների երթուղիները հստակ նշագրված են:

4.44. Սովորողներին իջեցնելու և վերցնելու գոտիներում իրականացվում է վերահսկողություն անվտանգության և տրանսպորտային ծառայության կողմից:

Ամբիոններին վերաբերող անվտանգության կանոններ

4.45. Գիտության, տեխնոլոգիայի և ֆիզիկական կուլտուրայի ամբիոնները պահպանում են իրենց անվտանգության կանոնները:

4.46. Ամբիոնների ղեկավարները պատասխանատու են իրենց աշխատակիցների վերապատրաստման և աշխատանքի անվտանգության համար:

Մասնագիտական ուսումնառության կազմակերպում

4.47. Մասնագիտական ուսումնառություն կազմակերպող կազմակերպությունները պետք է բավարարեն անվտանգության պահանջները:

4.48. Ռիսկերի գնահատումը արվում է նախքան ուսումնառությունը սկսելը:

Ճեմարանի տարածքում

4.49. Ճեմարանի տարածքը օգտագործող երրորդ կողմի անձինք կամ կազմակերպությունները պետք է հետևեն ճեմարանի անվտանգության քաղաքականությանը:

4.50. Պայմանագրերը ներառում են առողջության և անվտանգության համապատասխան դրույթներ:

Բռնություն կամ անհարգալից վերաբերմունք աշխատակիցների նկատմամբ

4.51. Ճեմարանը անհանդուրժող է աշխատակիցների հանդեպ բռնության, անհարգալից կամ չարաշահող վարքի նկատմամբ:

4.52. Բոլոր միջադեպերը հաղորդվում են և անմիջապես հետաքննվում համապատասխան ստորաբաժանման կողմից:

Բժշկական կարիքներ

4.53. Ծնողները տրամադրում են ճշգրիտ տվյալներ առողջության մասին՝ ըստ գործող օրենսդրության:

4.54. Քրոնիկ հիվանդություններ ունեցող սովորողների համար կազմվում են անհատական առողջապահական ծրագրեր:

4.55. Համապատասխան անձնակազմը նախապես տեղեկացվում է սովորողների բժշկական կարիքների վերաբերյալ:

4.56. Առանց սովորողի համար պատասխանատու անձին/ ավագ մանկավարժ, խմբի մանկավարժ, առաջնորդ/ տեղեկացնելու և բժշկական ծառայության հետ համաձայնեցնելու արգելվում է դպրոց բերել և օգտագործել ցանկացած դեղամիջոց:

4.57. Աշխատակիցներն անցնում են տարեկան պարտադիր բուժզննում:

4.58. Աշխատակիցների համար հասանելի է առողջության ապահովագրությունը:

Հոգեկան առողջության և սթրեսի կառավարում

4.59. Հասանելի են հոգեբանական և խորհրդատվական ծառայությունները:

4.60. Բարեկեցության ծրագրերը ուղղված են դիմադրողականության և հուզական կարգավորման խթանմանը:

4.61. Սովորողների և աշխատակիցների համար իրականացվում է սթրեսի ռիսկերի մշտադիտարկում:

Երեխաների պաշտպանություն

4.62. Անվտանգության միջոցառումները համապատասխանում են Ճեմարանի Երեխայի պաշտպանության քաղաքականությանը:

4.63. Մասնակցությունը տարեկան անվտանգության վերապատրաստմանը պարտադիր է բոլոր աշխատակիցների համար:

Սնունդ և սննդի անվտանգություն

4.64. Ճեմարանը խրախուսում է առողջ, հավասարակշռված և անվտանգ սնունդը՝ նպաստելով սովորողների ֆիզիկական բարեկեցությանը, առողջ ապրելակերպի ձևավորմանը և ուսումնական արդյունավետությանը:

4.65. Ճեմարանի հացատան ճաշացանկը կազմվում է ՀՀ գործող օրենսդրական և նորմատիվ պահանջներին համապատասխան, հաստատվում է բժշկական ծառայության և սննդի կազմակերպման խորհրդատուի կողմից, պարբերաբար վերանայվում է:

4.66. Մթերքը պահպանվում է համապատասխան պայմաններում, վերահսկվում են պիտանելիության ժամկետները, ապահովվում է համապատասխանությունը սննդի պահպանման առողջապահական և սանիտարահիգիենիկ նորմերին:

4.67. Սնունդը պատրաստվում է հստակ բաղադրագրերով:

4.68. Ճեմարանի տարածքում խստիվ արգելվում են՝ ալկոհոլային ըմպելիքները, գազավորված ըմպելիքները:

4.69. Սովորողների կողմից դրսից ցանկացած տեսակի սնունդ բերելն արգելվում է: Բացառիկ դեպքերում, առողջական հիմնավոր պատճառներով (օրինակ՝ բժշկական ցուցում, ալերգիա, հատուկ սննդակարգ), սովորողին կարող է թույլատրվել դրսից սնունդ բերել՝ համապատասխան գրավոր հիմնավորմամբ, ծնողի և բժշկական հաստատման առկայությամբ:

4.70. Ճեմարանում կազմակերպվող տոնակատարությունների, այդ թվում՝ ծննդյան օրերի ժամանակ կրեմով տորթերի, և նմանատիպ բարձր ռիսկայնությամբ սննդամթերքի օգտագործումն արգելվում է:

Թվային անվտանգություն

4.71. Սովորողները և աշխատակիցները հետևում են անվտանգ առցանց վարքագծի կանոններին:

4.72. Տվյալների պաշտպանությունը և գաղտնիությունը պահպանվում են բոլոր թվային համակարգերում:

5. ՌԻՍՈՒՑՈՒՄ ԵՎ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

5.1. Բոլոր աշխատակիցներն անցնում են առողջության և անվտանգության կոմիտեի կողմից կազմակերպված տարեկան վերապատրաստում:

5.2. Սովորողները ստանում են տարիքին համապատասխան անվտանգության կրթություն:

5.3. Առողջության և անվտանգության կոմիտեն տարեկան առնվազն երկու անգամ վերանայում է միջադեպերը և ռիսկերի գրանցամատյանները:

5.4. Մասնագիտական զարգացումը նպաստում է բարեկեցության ապահովմանը և արտակարգ իրավիճակներին պատրաստվածությանը:

6. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ

6.1. Սույն քաղաքականությունը վերանայվում է Առողջության և անվտանգության կոմիտեի կողմից ամեն տարի:

6.2. Խոշոր միջադեպերից կամ կարգավորող մարմինների պահանջների փոփոխություններից հետո իրականացվում են լրացուցիչ վերանայումներ:

6.3. Աշխատակիցների, սովորողների և ծնողների կարծիքները հիմք են հանդիսանում վերանայումների իրականացման համար:

6.4. Առողջության և անվտանգության կոմիտեն տարեկան հաշվետվություն է ներկայացնում տնօրենության խորհրդին:

Հավելված 1

ՄԻՋԱԴԵՊԻ ՀԱՂՈՐԴՄԱՆ ՔԱՐՏ (Երեխայի պաշտպանության և Առողջության ու անվտանգության քաղաքականությունների շրջանակում)

Ա. Ընդհանուր տեղեկություններ

1. Միջադեպի ամսաթիվը
2. Միջադեպի ժամը
3. Միջադեպի վայրը
   - ☐ Ճեմարանի տարածք
   - ☐ Արտադասարանային գործունեություն
   - ☐ Էքսկուրսիա / արշավ
   - ☐ Առցանց միջավայր
   - ☐ Այլ՝ _____

Բ. Տուժած / ներգրավված անձ(անց) տվյալներ

4. Անուն, ազգանուն
5. Տարիք (եթե սովորող է)
6. Դասարան / ստորաբաժանում
7. Կարգավիճակ
   - ☐ Սովորող
   - ☐ Աշխատակից
   - ☐ Այցելու
   - ☐ Կապալառու
   - ☐ Այլ՝ _____

Գ. Միջադեպի բնույթը (նշել համապատասխան տարբերակը)

Դ. Միջադեպի նկարագրություն

9. Միջադեպի մանրամասն նկարագրություն
(ինչ է տեղի ունեցել, ինչպես, երբ, ում մասնակցությամբ՝ առանց մեկնաբանությունների կամ ենթադրությունների)

Ե. Անմիջական արձագանք

10. Անմիջապես ձեռնարկված գործողություններ
☐ Առաջին օգնություն
☐ Բժշկական աջակցություն
☐ Երեխայի անվտանգ միջավայրի ապահովում
☐ Տարածքի մեկուսացում
☐ Այլ՝ _____

11. Վնասվածքի կամ ռիսկի մանրամասներ
(վնասվածքի տեսակ, ծանրության աստիճան, անհրաժեշտ միջամտություն)

Զ. Տեղեկացում

12. Ովքեր են տեղեկացվել
☐ Երեխայի պաշտպանության պատասխանատու (CPO)
☐ Առողջության և անվտանգության պատասխանատու
☐ Բուժաշխատող
☐ Ծնող / օրինական ներկայացուցիչ
☐ Ճեմարանի ղեկավարություն
Տեղեկացման ամսաթիվ և ժամ՝ _____

Է. Վկաներ

13. Վկաների տվյալներ
(անուն, ազգանուն, կարգավիճակ)

Ը. Հետագա գործողությունների մասին

14. Պահանջվո՞ւմ են հետագա քայլեր
☐ Ներքին հետաքննություն
☐ Երեխայի պաշտպանության ընթացակարգի գործարկում

☐ Ռիսկերի վերագնահատում
☐ Աջակցություն սանին / ընտանիքին
☐ Այլ՝ _____

Թ. Հաղորդումը լրացրած անձ

Անուն, ազգանուն՝ _____
Պաշտոն՝ _____
Ստորագրություն՝ _____
Ամսաթիվ՝ _____

Ժ. Հետաքննության արդյունքներ (լրացվում է պատասխանատու մարմնի կողմից)

15. Փաստական եզրակացություն

16. Ուղղիչ և կանխարգելիչ միջոցառումներ

Ի. Վերանայում

18. Վերանայող մարմին
☐ Երեխայի պաշտպանության թիմ
☐ Առողջության և անվտանգության հանձնաժողով

Եզրակացություն՝ _____
Ամսաթիվ՝ _____
անուն, ազգանուն, պաշտոն Ստորագրություն՝ _____

Հավելված 2. Պատասխանատու անձանց ցանկ

Խնդրի բնույթը	Պաշտոն	Անուն/ազգանուն	Հեռախոսա-համար	Էլեկտրոնային հասցե
Երեխայի հանդեպ բռնությանն առնչվող միջադեպեր	Երեխայի պաշտպանության լիազորված ներկայացուցիչ	Գայանե Գրիգորյան, Տաթևիկ Արզումանյան, Աննա Ստեփանյան	093929201 096007705 094625028	cpo-primary@shirakatsy.am cpo-middle@shirakatsy.am cpo-high@shirakatsy.am
Հրդեհային անվտանգության, ճեմարանին պատկանող ֆիզիկական տարածքներում ծագած վտանգների հաղորդում	Ճեմարանի փոխտնօրեն ընդհանուր հարցերով	Աշոտ Դավթյան	091480335	Ashotdavtyan@shirakatsy.am
Սանիտարական մաքրության և սանտեխսպասարկման հետ կապված խնդիրների, միջադեպերի մասին հաղորդում	Ճեմարանի փոխտնօրեն ընդհանուր հարցերով	Աշոտ Դավթյան	091480335	Ashotdavtyan@shirakatsy.am

Խաղահրապարակի և սարքավորումների անվտանգության ապահովման հետ կապված միջադեպերի հաղորդում	Ճեմարանի փոխտնօրեն ընդհանուր հարցերով	Աշոտ Դավթյան	091480335	Ashotdavtyan@shirakatsy.am
Աշխատակիցների նկատմամբ բռնության կամ անպատշաճ վերաբերմունքի միջադեպերի մասին հաղորդում	Ճեմարանի մարդկային ռեսուրսների գծով փոխտնօրեն	Անի Հարությունյան	093459174	aniharutyunyan1@shirakatsy.am
Առողջության պահպանման, առաջին բուժօգնության կարիք ունեցող միջադեպերի մասին հաղորդում	Ճեմարանի առողջության կենտրոնի աշխատակիցներ	Նունե Խաչատրյան Լուսինե Մաթևոսյան Անգելինա Սիմոնյան/ԿԴ/ Կարինե Խաչատրյան/ՄԿ/	094833383/նե րքին համար՝ 303/ 098304478 055 394019 055272004	nunekhachatryan@shirakatsy.am lusinematevosyan@shirakatsy.am angelinasimonyan@shirakatsy.am karinekhachatryan@shirakatsy.am

Էքսկուրսիաների, այցերի, արտաճեմարանական գործունեության ժամանակ տեղի ունեցած միջադեպերի մասին հաղորդում	ԿԴ տնօրեն ՄԴ տնօրեն ԱԴ տնօրեն	Գայանե Գրիգորյան, Տաթևիկ Արզումանյան, Աննա Ստեփանյան	093929201 096007705 094625028	gayanegrigoryan@shirakatsy.am tatevikarzumanyan@shirakatsy.am Annastepanyan@shirakatsy.am
Տրանսպորտային միջոցներում տեղի ունեցած միջադեպերի մասին հաղորդում	Ճեմարանի փոխտնօրեն ընդհանուր հարցերի գծով	Աշոտ Դավթյան	091480335	Ashotdavtyan@shirakatsy.am